ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 01-Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքում տարածված սուր շնչառական վարակների առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2023 թվականի հունվարի 4-ից դադարեցնել Նոյերերյան համյանքի տարածքում գործող մանկապարտեզների գործունեությունը՝ կապված սուր շնչառական վարակիչ հիվանդությունների հետ:

2. Աշխատանքները վերսկսել 2023 թվականի հունվարի 9-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունվարի 03
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 02-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրում գտնվող 11-043-0025-0010 կադաստրային ծածկագրով հողամասին և նրա վրա գտնվող անշարժ գույքին տրամադրել հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան գյուղ Հաղթանակ, 3-րդ փողոց, 27 բնակելի տուն հասցեում փոստային դասիչ 4111:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հունվարի 04
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 03-Ա

## ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, 7-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերով 59-րդ հոդվածով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի Կողբ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 11-041-0013-0014 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.04478 հա մակերեսով հողամաս, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր և փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
2. Առանձնացված հողամասի նկատմամբ որպես առանձին գույքային միավոր պետական գրանցում կատարելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թ. հունվարի 04
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 04-Ա

### ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10 հունիսի 2008 թվականի ՀՀ օրենքով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի կիրառումն ապահովելու մասին 13 նոյեմբերի 2008 թվականի թիվ 1328-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի գյուղ Ոսկեպար, 1-ին փողոց, 21 բնակելի տուն hասցեում (ծածկագիր 11-049-0005-0005) Հունան Մուսայելի Բաղալյանին, Ալիսա Ջահանի Բաղալյանին, Վահե Հունանի Բաղալյանին և Անի Հունանի Բաղալյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.14 հա մակերեսով հողամասին կից ավել օգտագործվող 0.001393 հա մակերեսով հողամասի նկատմամբ (ամբողջը՝ 0.15393 հա) ճանաչել Հունան Մուսայելի Բաղալյանի՝ ծնված 10.08.1962 թվականին, Ալիսա Ջահանի Բաղալյանի՝ ծնված 1965 թվականին, Վահե Հունանի Բաղալյանի՝ ծնված 1985 թվականին և Անի Հունանի Բաղալյանի՝ ծնված 1987 թվականին, սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հունվարի 09
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 05-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի վարչական տարածքում Նվեր Արարատի Քոչարյանին պատկանող՝ 11-012-0316-0002 և 11-012-0117-0008 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, քաղաք Այրում Ս. Շահումյան փողոց 31 ավտոտնակ հասցեում, փոստային դասիչ 4102:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԲԱՔՅԱՆ**

2023 թ. հունվարի 09
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 06-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Կոթի բնակավարի վարչական տարածքում գտնվող Ծաղացյոլ Անդրեսյանին պատկանող՝ 11-040-0039-0009 և 11-040-0039-0010 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, գ. Կոթի 1-ին փողոց 33/4 խանութ հասցեում, փոստային դասիչ 4109:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱՍԱՐՅԱՆ

2023 թ. հունվարի 09
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 07-Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 05.01.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, հիմք ընդունելով Նոյեմբերյանի համայնքապետարանի մրցութային հանձնաժողովի 05.01.2023 թվականի թիվ 01 նիստի արձանագրությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան Կողբ բնակավայր 11-041-0315-0002 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 4.66515 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Անդրանիկ Վոլոդյայի Զուրաբյանին:
ա) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 7000 (յոթ հազար) ՀՀ դրամ:

2. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան Բաղանիս բնակավայրի 11-017-0110-0264 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.6771 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Արմեն Ռաշիդի Ալավերդյանին:

ա) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 5000 (հինգ հազար ) ՀՀ դրամ:

3. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան բնակավայր Բաղանիս 11-017-0110-0265 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.1686 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Մելինե Սենիկի Ալավերդյանին:

ա) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 1500 ( հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

4.Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Մալխասյանին՝ ապահովել վարձակալության տրամադրելու համար անհրաժեշտ փաթեթների կազմումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԼԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հունվարի 09
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 08-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 13-ի թիվ 118-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 11-049-0104-0038 ծածկագրով 2.0 հա մակերեսով հողամասը /նպատակային նշանակությունը՝ հատուկ նշանակության, գործառնական նշանակությունը՝ հատուկ նշանակության/ նվիրատվության կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

2023 թ. հունվարի 10
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 09-Ա

### ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11-043-0106-0113,11-043-0106-0114,11-043-0106-0116, 11-043-0106-0117 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 79-րդ հոդվածով և հիմք ընդունելով, որ Նոյեմբերյանի համայնքապետարանում 10.01.2023 թվականին հայտարարված մրցույթին հայտատուներ չեն եղել՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնք Նոյեմբերյան բնակավայր Հաղթանակ 11-043-0106-0113, 11-043-0106-0114, 11-043-0106-0116, 11-043-0106-0117 կադաստրային ծածկագրերով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, հողամասերի վարձակալության մրցույթները համարել չկայացած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հունվարի 13
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 10-Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 10.01.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 02 ՆԻՍՏԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, հիմք ընդունելով Նոյեմբերյանի համայնքապետարանի մրցութային հանձնաժողովի 10.01.2023 թվականի թիվ 02 նիստի արձանագրությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան Դեբեդավան բնակավայր 11-024-0154-0018 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.9154 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Վեներա Արկադիի Աղաջանյանին:
   ա) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 7000 (յոթ հազար) ՀՀ դրամ:
2. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաներիբաժնի գլխավոր մասնագետ Գոհար Մալխասյանին՝ ապահովել վարձակալության տրամադրելու համար անհրաժեշտ փաթեթների կազմումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հունվարի 13
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 11-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Կողբ բնակավայրում գտնվող 11-041-0013-0014 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան գյուղ Կողբ, 24 -րդ փողոց, 21/2 հողամաս հասցեում փոստային դասիչ 4110:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. հունվարի 13
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 12-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՈՂ՝ ՌԻՄԱ ՍԵՐՈԺԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16- րդ կետով և հիմք ընդունելով 2017 թվականի մարտի 03-ի Այրում համայնքի ավագանու թիվ 13-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Դեբեդավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյան համայնք գյուղ Դեբեդավան 6-րդ փողոց շենք 1 բնակարան 5 հասցեում գտնվող 55,9 քմ բնակելի մակերեսով բնակարանը ուղղակի վաճառքով օտարել փաստացի տիրապետող՝ Ռիմա Սերոժի Գալստյանին՝ 16770 (մեկ քառակուսի մետրը երեք հարյուր) ՀՀ դրամ արժեքով, որը պետք է վճարվի Նոյեմբերյան համայնքի 900395118129 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հունվարի 13
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 13-Ա

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 17.09.2009 թվականի «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մասին» թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Դեբեդավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-024-0154-0031 կադաստրային ծածկագրով 1,68981 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել նույն կարգի ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկի (կորիզավորի):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հունվարի 13
ք.Նոյեմբերյան